Տատեան վարկերու փառաւոր և շահաւոր արդիւնքը, գլխաւորապէս վաճառելով Ռումէլիի և Անատոլուի հրապարակներուն և մեծ բանայիներուն մէջ ալ ամերիգանի կտաւի և պասմայի մեծաքանակ մթերք՝ սովորական տեսակներու և ճաշակներու վրայ, որ դեռ չէին պահանջեր այնքան նուրբ խելք և ճարտարութիւն։ Եւ աւելի՝ փառաւորութեամբ ու տեւականութեամբ կը վայելէին՝ եթէ բազմօք զանգուած չըլլային Պոլսահայոց այն անիմաստ շռայլութեամբ և անհաստատ ու ոչ անպատիր վարք ու բարքով, որ գլխաւոր պատճառներն եղած են պարզմիտ հարստութեանց նուազումին։

Բափամաճեանց այս մեծ առաջին տան մէջ կըրթուած մարզուած են Կ. Պոլիսի հրապարակին հին մանիֆաթուրաճիներէն ոմանք, մանաւանդ պասմաճիներէն. որոցմէ կըրնանք յիշել Յովհաննէս Խոնչէկիւլեան՝ հմո՛ւտ Անատոլուի շահաստաններուն փայլուն և նախշուն տեսակներուն, ինչպէս իր կրտսեր եղբայրը՝ Տիգրան Ղոնչէկիւլեան, վարպետորդի ներակրթեալ մը Կ. Պոլիսի հին պասմայի հրապարակին գործառնութեանց և խօսելակերպերուն՝ հմո՛ւտ ժամանակին Ռումէլիի շահաստաններուն ճկուն տեսակներուն. Մարտիրոս Թոքաթեան՝ բազմաշխատ գրագիր ու գործակատար մը, որ Յովհ. Տէրոյենցի պարկեշտ դպրոցին աշակերտներէն էր, ու ապա իր արթնամտութեամբն յաջողեցաւ առանձին տուն մը բանալ ի Մանչէսդրը և բազմանալ ու բազմացունել իր միւս եղբայրները. նաև ուրիշ կարգ մը երկրորդականներ, որ ապա հիմնեցին իրենց հաշուոյն զատ գործեր և տուներ, և պասմայի զուարթ ու շահաբեր ճիւղը զարգացուցին և բերին հասուցին մինչեւ 1880—1890՝ պասմանիութեան վերջին ոսկեդարը։

Բափամաճեանցմէ քիչ ետքը՝ Մանչէսդրի մէջ կա-